ՈՒԴԴ 551.544:339.333

Ա.Խ. Մարկոսյան, Հ.Ս. Հովհաննիսյան, Հ.Վ. Թոքմաջյան

Ջրի և այլ բնական պաշարների կառավարման կոնցեսիայի եղանակը

(Ներկայացված է ակադեմիկոս Ֆ.Տ.Սարգսյանի կողմից 8 /VII 2002)

Ջրի և բնական մյուս պաշարների կառավարման տարածված ձևերից բացի ներկայումս կարևորվում է կառավարման նոր մեթոդների օրենսդրական ամրագրումը և դրանց կիրառումը: Երկրի ազգային հարստության գլխավոր մասը կազմող ջրի և այլ բնական պաշարների վերամշակման ձեռնարկությունների կառավարման և արդյունա-վետության բարձրացման տեսանկյունից մեծ նշանակություն ունի կոնցեսիան, որը հանրապետությունում ինչպես օրենսդրության մեջ, այնպես էլ գործնականում իր պատշաճ դերը դեռևս չունի: Կառավարման այս եղանակի կիրառման դեպքում ջուրը (այլ բնական պաշարները) մնում է պետական սեփականություն, այսինքն դասական առումով այն չի օտարվում: Այլ կերպ ասած, ժամանակավորապես օտարվում է գույքի տիրապետման և օգտագործման իրավունքը: Ընդ որում, այդ իրավունքը կարող է օտարվել որոշակի պայմաններով (այդպիսի պայմաններ կարող են լինել որոշակի ժամանակահատվածներով ներդրումների ծավալները, աշխատատեղի և նվազագույն (կամ միջին) աշխատավարձի չափը, գործունեությունից ստացված արդյունքի միջոցով իրականացված ծախսերի փոխհատուցումը և այլն): Այս տեսանկյունից Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված պայմանագրերից ասվածին ամենից շատ մոտ է վարձակալությունը (որոշակի վերապահումներով): Այսպես, նշված օրենսգրքի 606 հոդվածի («Վարձակալության պայմանագիր») համա-ձայն. «վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք» ([1], էջ 207): Ինչպես տեսնում ենք, գույքի վարձակալության դեպքում չի փոխվում գույքի տնօրինման վարձատուի սեփականության իրավունքը, սակայն վերը բերված մեջբե-րումից հետևում է, որ գույքը վարձակալության տալու դեպքում դրվում է միայն երկու պայման. գույքի տիրապետման և (կամ) օգտագործմանը հանձնելու ժամանակը և վարձակալական վճարը: Հեշտ է նկատել, որ գույքի վարձակալության դեպքում մեր կողմից նշված պայմանները չեն կարող դրվել: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված է, որ վարձակալված գույքի օտարման արդյունքում վարձակալի ստացած պտուղները, արտադրանքը և եկամուտները նրա սեփականությունն են, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով ([1], էջ 207): Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ բնական ռեսուրսների հանքավայրերը օգտագործման իրավունքով (կոնցեսիա) տալու հիմնական առավելությունը (առանձ-

նահատկությունը) վարձատուի համար այն է, որ դրամական կամ այլ միջոցներ չեն պահանջվում դրա օգտագործման համար, բացի հանքավայրի տրամադրման (տիրապետման) իրավունքից և այն պայմանից, որ համատեղ գործունեությունից ստացված միջոցները որոշակի համամասնությամբ (պայմանագրով նախատեսված չափերով) պետք է բաշխվեն կողմերի միջև և վարձատուի կողմից տրված միջոցներով կփոխհատուցվեն վարձակալի կատարած ծախսերը, ապա ակնհայտ է, որ ստացված արտադրանքի կամ դրանից առաջացած դրամամուտքի բաշխումն ունի տարբերոշիչ կարևորություն: Ասվածից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված վարձակալությունը միայն որոշակի վերապահումներով կարող է վերաբերել բնական պաշարների օգտագործմանը:

Պատկերն անբողջական դարձնելու նպատակով անհրաժեշտ է նշել, որ (հոդված 608. «Վարձակալության օբյեկտները») վարձակալության կարող են հանձնվել հողամասեր և մեկուսի բնական այլ օբյեկտներ, շենքեր, շինություններ, սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ և այլ գույք, որոնք օգտագործման ընթացքում չեն կորցնում իրենց բնական հատկությունները (չսպառվող գույք): Օրենքով կարող են սահմանվել հողամասերը և մեկուսի բնական այլ օբյեկտները վարձակալության հանձնելու առանձնահատկությունները ([1], էջ 207): Ստացվում է, որ բնական հանքավայրերի վարձակալությունը պետք է կարգավորվի առանձին օրենքով, մանավանդ որ օրենսգրքով հստակ չեն սահմանված «հողամաս և մեկուսի բնական այլ օբյեկտներ» հասկացությունները: Նման խառնաշփոթը վերացնելու և հստակություն մտցնելու նպատակով կարծում ենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 608 հոդվածի 2 կետում «հանձնելու» բառից հետո պետք է ավելացնել «(բնական պաշարների կոնցեսիայի)» բառերը: Դրանով կհստակեցվի, որ բնական պաշարների վարձակալության տալը կոնցեսիա հասկացությունն է և որ այդ իրավահարաբերությունները պետք է կարգավորվեն օրենքով:

Այն միտքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Գլուխ 35. Վարձակալություն» մասը չի վերաբերում բնական պաշարներին, ընդգծվում է 610 հոդվածի 3 կետով («Գույքի վարձակալության պայմանագիրը, որը նախատեսում է հետագայում այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում վարձակալին (հոդված 627), կնքվում է այդպիսի գույքի առուվաճառքի պայմանագրի համար նախատեսված ձևով», 627 հոդվածով («Վարձակալած գույքը գնելը»). «1. Օրենքով կամ վարձակալության պայմանագրով կարող է նախատեսվել, որ վարձակալած գույքը վարձակալության ժամկետը լրանալուց հետո կամ մինչև դրա լրանալն անցնում է վարձակալի սեփականությանը՝ վարձակալի կողմից պայմանագրով պայմանավորված ամբողջ գումարը վճարելու պայմանով:

Եթե վարձակալության պայմանագրում նախատեսված չէ վարձակալած գույքը գնելու պայման, այն կարող է սահմանվել կողմերի լրացուցիչ համաձայնությամբ, որոնք իրավունք ունեն պայմանավորվել՝ նախապես մուծված վարձավճարը գնի մեջ հաշվարկելու մասին»:

Ինչպես հայտնի է, բնական պաշարները կամ ընդերքը գործող «Ընդերքի օրենսգրքի» համաձայն համարվում է պետության բացառիկ սեփականություն և այն չի

սեփականաշնորհվում ([2], հոդված 3): Բացի այդ, վարձակալության առանձին տեսակների և գույքի առանձին տեսակների վարձակալության առանձնահատկությունները նկարագրող ՀՀ ԹՕ հոդված 628-ում նշված են միայն վարձակալության այն պայմանագրերը, որոնք վերաբերում են վարձույթին, տրանսպորտային միջոցների, շենքերի և շինությունների, բնակելի տարածության և ֆինանսական վարձակալությանը:

Ստեղծված խառնաշփոթը որոշակիորեն պարզեցնելու ուղիներից մեկն այն է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 628 հոդվածում նշվի նաև բնական պաշարների վարձակալության (կոնցեսիայի) մասին և բացի այդ առանձին պարագրաֆով (ինչպես դա արված է վարձակալության մյուս տեսակների համար) նշվեն վարձակալության այդ տեսակի հիմնական առանձնահատկությունները, ինչը զգալիորեն կհեշտացնի բնական պաշարների վարձակալության գործընթացը:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով հստակորեն առանձնացված չեն վարձակալության օբյեկտները (հոդված 608), հավատարմագրային կառավարման օբյեկտը (հոդված 955. «1. Հավատարմագրային կառավարման օբյեկտ կարող են լինել անշարժ գույքի առանձին տեսակներ, արժեթղթեր, ոչ փաստաթղթային արժեթղթերով հավաստված իրավունքներ, բացառիկ իրավունքներ և այլ գույք»):

Եթե փորձենք պատասխանել այն հարցին, թե բնական պաշարների օգտագործումը վերը նշված երեք ձևերից որին է պատկանում, նկատելիորեն կդժվարանանք, եթե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Վարձակալություն» բաժնում չկատարվեն մեր կողմից վերը նշված առաջարկությունները:

Այն կարևոր պնդումը, որ բնական պաշարների կամ ընդերքի սեփականատիրոջ բացառիկ իրավունքը պատկանում է միայն պետությանը, ամրագրված է միայն գործող «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքով (բացառությամբ ջրային ռեսուրսների, որը ամրագրված է 2002 թ. ՀՀ Ջրային օրենսգրքով [3]), որն ընդունվել է մինչև ՀՀ Սահմանադրության ընդունումը (1995 թ. հուլիսի 5-ը): Նշված միտքը ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված չէ: Կարծում ենք, ՀՀ Սահմանադրության մեջ առաջիկայում կատարվող փոփոխություններում և լրացումներում այդ հանգամանքը պետք է հաշվի առնել: Նման մոտեցումը պայմանավորված է նախ երկրի զարգացման և նրա գոյատևման գործում բնական պաշարների (այդ թվում նաև ջրային պաշարների) կարևորությամբ, դրանց կառավարման գործում միասնական քաղաքականության վարման հրամայականով, այդ պաշարների հանրային բնույթով և ամբողջ հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի կարիքներին ծառայեցնելու մարդասիրական պահանջներով, ինչպես նաև երկրի տարածքի փոքր չափերով: Բնական պաշարները, իրոք, ազգային հարստության այն մասն է, որը ամբողջությամբ պատկանում է ժողովրդին, և դրանց կառավարումը պետք է կատարվի օրենքով սահմանված կարգով:

Ջրային ռեսուրսները կառավարելիս կոնցեսիայի պայմանագրով կարող է տրամադրվել ջրային համակարգը կամ դրա մասը: Կոնցեսիայի պայմանագրի տրամադրման դեպքում ջրային համակարգերի կառավարման մարմինը կարող է՝

1) որոշում կայացնել որոշակի ջրային համակարգի նկատմամբ մրցութային կարգով կոնցեսիայի պայմանագրի տրամադրման մասին,

2) կոնցեսիայի պայմանագիր շնորհել առաջին հայտատուին կամ, եթե միևնույն ջրային համակարգը կոնցեսիայի պայմանագրով ստանալու համար միաժամանակ դիմել են մի քանի հայտատուներ, ընտրել այն հայտը, որով առաջարկվում են լավագույն պայմանները:

Ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ

А.Х.Маркосян, О.С.Оганисян, О.В.Токмаджян

Концессия как способ управления водными и другими природными ресурсами

С целью эффективного управления водными и другими природными ресурсами, которые составляют основную часть национального богатства, предлагается применять концессию. При этом водные и другие природные ресурсы остаются государственной собственностью, в то время как при аренде не исключается возможность изменения формы собственности. Предлагаются конкретные изменения в Конституции и Гражданском кодексе Республики Армения.

Գրականություն

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք – Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 1998, N 17 (50):
2. ՀՀ ընդերքի օրենսգիրք - 1992թ. մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», N 6 (1010):
3. Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք - Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2002, N 24: